

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

2017 թվականի չորրորդ եռամսյակում Սյունիքի մարզպետարան մուտք գործած և առաքված փաստաթղթերի վերաբերյալ

2017 թվականի չորրորդ եռամսյակում մարզպետարան է մուտքագրվել՝ 3626 թղթակցություն, առաքվել՝ 2304 փաստաթուղթ: Այդ թվում ստացվել է ՀՀ Ազգային ժողովից՝ 3, ՀՀ վերահսկիչ պալատից՝ 1, ՀՀ կառավարությունից և վարչապետից՝ 398, ՀՀ նախարարություններից և գերատեսչություններից՝ 355, հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայություններից և այլ կազմակերպություններից՝ 1066, տեղական ինքնակառավարման մարմիններից՝ 779, քաղաքացիներից՝ 1016 դիմում, գաղտնի թղթակցություն՝ 8: ՀՀ Նախագահի աշխատակազմից մարզպետարան է վերահասցեագրվել 3, ՀՀ կառավարությունից և վարչապետի աշխատակազմից՝ 14, ՀՀ նախարարություններից՝ 13 դիմում:

Կանոնակարգված է մարզպետի մոտ քաղաքացիների ընդունելությունը. ամսական մեկ անգամ մարզկենտրոնում (յուրաքանչյուր ամսվա վերջին երկուշաբթի օրը) կատարվել է քաղաքացիների ընդունելություն: Բացի այդ, քաղաքացիների ընդունելություն է կատարվել նաև մարզպետի՝ համայնքներ կատարած ամենամսյա այցելությունների ժամանակ: 2017թ. չորրորդ եռամսյակում կատարվել է 289 քաղաքացիների ընդունելություն: Մարզպետի մոտ ընդունելության համար հերթագրված և ընդունելությանը մասնակցած քաղաքացիների վերաբերյալ տեղեկատվությունը պարբերաբար տեղադրվում է մարզպետարանի պաշտոնական կայքէջում:

Աշխատակազմի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների ղեկավարները քաղաքացիների ընդունելությունը կազմակերպել են ամենօրյա, աշխատանքային կարգով:

Քաղաքացիների ընդունելության, նրանց դիմումների, բողոքների ու առաջարկությունների քննարկումների մասին հաշվետվությունը և այդ աշխատանքների վիճակի մասին ամփոփ տեղեկատվությունը սահմանված պարբերականությամբ ներկայացվել է ՀՀ կառավարություն ու ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն:

Քաղաքացիների ընդունելության արդյունքների մասին տեղեկատվություն է ներկայացվում նաև ՀՀ Նախագահի աշխատակազմ: